

**CASH AID ԵՎ CALFRESH  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՉԵԿՈՒՅՈՒՄ**

ԳՈՐԾԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ:	
ԳՈՐԾԻ ԳԱՄԱՐԸ:	
ԱՇԽԱՏՈՐԻ ԳԱՄԱՐԸ:	

Քանի որ դուք ստանում եք  Cash Aid  CalFresh, դուք պետք է 10 օրվա ընթացքում մեզ զեկուցեք այն դեպքում, երբ ձեր եկամուտների ԸՆԴՀԱՆՈՒՐ գումարը հասնում է որոշակի մակարդակի: Դուք պետք է զեկուցեք ամեն անգամ, երբ ձեր ընտանիքի ընդհանուր ամսական եկամուտը գերազանցում է ձեր ընթացիկ եկամուտների Չեկուցման Շեմը (IRT):

Նպատակի տեսակը	CalWORKs	CalFresh
Ընտանիքի անդամների քանակը		
Ձեր ընթացիկ եկամուտը		
<b>Ձեր IRT-ն կազմում է</b>		

**Նշում.** Եթե ձեր IRT-ն CalFresh-ի համար նշված է որպես «Չկա», ապա ձեզանից չի պահանջվում զեկուցել եկամտի փոփոխությունները CalFresh-ի համար մինչև ձեր հաջորդ SAR 7 կամ վերավկայազրույցը, որը որ ավելի շուտ տեղի կունենա: Սակայն, եթե CalWORKs-ի համար IRT գումար է նշված, դուք պետք է զեկուցեք, երբ ձեր համախառն եկամուտը գերազանցի այդ գումարը:

**Ինչպե՞ս զեկուցել:**

Եթե ձեր ընդհանուր եկամուտը գերազանցում է վերը նշված IRT-ի արժեքը, ապա դուք պետք է այդ մասին զեկուցեք վարչաշրջանին **10 օրվա ընթացքում:** Դուք այդ տեղեկությունները կարող եք տրամադրել վարչաշրջանին զանգահարելու միջոցով կամ գրավոր տեսքով:

«Ամսական ընդհանուր եկամուտի» տակ մենք հասկանում ենք.

- ⇒ Ձեր կողմից ստացվող բոլոր դրամական միջոցները (ինչպես վաստակած, այնպես էլ չվաստակած):
- ⇒ Գումարը *մինչև* բոլոր տեսակի հանումներ կատարելը: (Հանումների օրինակներն են՝ հարկերը, Սոցիալական ապահովագրության կամ կենսաթոշակային այլ վճարները, կալանքի տակ գտնվող գումարները և այլն):

**Ի՞նչ է տեղի ունենալու:**

- ⇒ Ձեր նպաստները նվազեցվելու կամ դադարեցվելու են՝ կախված IRT-ն գերազանցող եկամուտների գումարի չափից:
- ⇒ Ձեր IRT-ն կարող է փոխվել ձեր եկամուտների կամ ընտանիքի անդամների կազմի փոփոխման դեպքում:
- ⇒ Ձեր IRT-ի յուրաքանչյուր փոփոխության մասին վարչաշրջանը ձեզ կտեղեկացնի գրավոր տեսքով:
- ⇒ Դուք պետք է նաև զեկուցեք ձեր SAR 7 բոլոր եկամուտները Ամսական զեկուցման ժամանակ, նույնիսկ եթե արդեն զեկուցել եք այդ դրամը:

**Տույժեր չզեկուցելու համար**

Եթե դուք չզեկուցեք այն մասին, որ ձեր եկամուտները գերազանցել են ձեր ընտանիքի IRT սահմանաչափը, ապա դուք կարող եք ստանալ ձեզ հասանելի գումարը գերազանցող նպաստներ: Դուք **պետք է փոխհատուցեք** ձեր կողմից ստացված ավելորդ նպաստները: Լրացուցիչ նպաստներ ստանալու նպատակով միտունավոր չզեկուցելը համարվում է խարդախություն, և դուք կարող եք հետապնդվել քրեական կարգով, և/կամ հնարավոր է, գրկվեք CalFresh-ից որոշ ժամանակով կամ ընդմիջո:

**Եթե դուք Cash Aid եք ստանում, դուք ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ ՆԱԵՎ զեկուցել հետևյալի մասին **10 օրվա ընթացքում** դա տեղի ունենալուց հետո.**

1. Ամեն անգամ, երբ ձեր կենցաղին միացող նոր անդամը կամ արդեն ներկա անդամը դատարանի որոշմամբ համարվում է փորձաշրջանի կամ վաղաժամկետ ազատման պայմանների խախտող:
2. Ամեն անգամ, երբ ձեր կենցաղին միացող նոր անդամը կամ արդեն ներկա անդամը փախչում է օրենքից (ձերբալակման մասին հրաման ունի):
3. Ձեր հասցեի յուրաքանչյուր փոփոխության դեպքում:

**Եթե դուք CalFresh եք ստանում, դուք ՊԱՐՏԱՎՈՐ ԵՔ ՆԱԵՎ զեկուցել հետևյալի մասին.**

- Եթե դուք հանդիսանում եք Առանց խնամառուների աշխատուձևի չափափաս անձ (ABAWD), ապա պարտավոր եք զեկուցել բոլոր այն դեպքերի մասին, երբ ձեր աշխատանքային կամ ուսուցման ժամերի քանակը դառնում է շաբաթը 20 ժամից կամ ամիսը 80 ժամից *պակաս*:

**Կամավոր հաղորդվող տեղեկություններ**

Փոփոխությունների մասին ցանկացած պահի կարող եք նաև կամավոր զեկուցել վարչաշրջանին: *Որոշ փոփոխությունների մասին զեկուցելը կարող է ձեզ համար ապահովել նաև լրացուցիչ նպաստներ:* Օրինակ՝

- ձեր եկամուտը դադարում է կամ նվազում է:
- եկամուտ ստադոց որևէ մեկը հեռանում է ձեր տնից:
- եկամուտ ստադոց որևէ մեկը տեղափոխվում է ձեր տուն:
- տանը ինչ-որ մեկը հղիանում է:
- երբ դրամական օգնություն ստացողներից մեկի մոտ առաջանում է հատուկ կարիք, օրինակ՝ հղիության, բժշկի կողից նշանակված հատուկ սննդակարգի, կենցաղում արտակարգ իրավիճակների առաջացման դեպքերում և այլն:
- երեխա է ծնվում:
- CalFresh-ի համար՝ եթե որևէ հաշմանդամ կամ 60 տարեկան կամ ավելի բարձր տարիքի անձ ունի նոր կամ ավելի բարձր կանխիկ բժշկական ծախսեր:

**Նշում.** Կամավոր զեկուցվող որոշ փոփոխություններ կարող են նվազեցնել ձեր CalFresh նպաստները: